Ի միջի քուամ կան հաստատ ընակարան,
Թէ և կարգաւորք կամ աշխարհական
Քեզ սպասաւորեն միշտ ծառայական,
Տիրող, տենչալի տաճար Սուրբ Նշան:

Կարգաւ բոլորիս բաղում օթեւան,
„Երթևեկողաց տեղ ասպընջական.
Դու ի ծոց նորին բազմեալ գովական
Հանգիստ հաճելի, հաստատ Սուրբ Նշան:

Ցարտ ես, և ոչ կայ քեզ նմանական,
Տեսօք և տեղեաւ յոյժ հիացական,
Ամենայն բարեօք լցեալ լիական
Փառօք փառաւոր, փարթամ Սուրբ Նշան:

Արծաթ և ոսկի անօթ ընտրական,
Բուռվառ և կանթեղ, խաչ, աւետարան,
Շուրջառ և վակաս, ուրար և բազպան
Զանազան զարդիւք զեղուն Սուրբ Նշան ..

Երկու աղբերօք ջուր համեղական.
Ասեալ են մայրօք զքեզ պարտական,
Կաս դու 'ի միջի պերճով սեփական,
Կաքաւեալ կայթեա, կայան Սուրբ Նշան:

Ցանկան փափաքին ազգիք ամենայն,
Մինչև այլազգիք առ ատրս քո գան,
Մրուղա և պարոն համ Սուլդան և Խան,
Հիացեալ հային հիմանդ Սուրբ Նշան:

Թէպէտև այժմ թափուր է Ս. Նշան այն արծաթեայ և ոսկեայ ընտրական անօթներէն, այլ ունի մեծ գիւղեր, անտառներ և այգիներ, որք տարուէ տարի 6000 ռուբլի եկամուտ կու բերեն, եթէ այդ հազարաց վեցին մին ամէն տարի, այդ հին սրբատեղւոյն վրայ ծախսուի, թափած և փլածը ծեփուի նորոգուի, դարձեալ կը չէննայ Ս. Խաչ, և ազգիս